**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 10**
**ԵՊՀ տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի գիտական խորհրդի**
**2026թ. ապրիլի 15-ի նիստի**

Խորհրդի 32 անդամներից նիստին ներկա էին 29-ը: Նախագահում էր խորհրդի նախագահ դեկան, տ.գ.թ., դոցենտ Կ. Խաչատրյանը, քարտուղարում՝ խորհրդի քարտուղար տ.գ.թ., դոցենտ Հ. Մարգարյանը:

Քվորումը ստուգելուց հետո խորհրդի նախագահը քվեարկության դրեց օրակարգը, որը միաձայն հաստատելուց հետո խորհուրդն անցավ օրակարգային հարցերի քննարկմանը (օրակարգը կցվում է):

**ՕՐԱԿԱՐԳ**

1. Որոշ կրթական ծրագրերի ուսումնական պլաններում փոփոխություն
2. 2025/26 ուստարվա 1-ին կիսամյակի առկա և հեռակա ուսուցման՝ ուսանողների առցանց հարցումների արդյունքների քննարկում
3. ՀՀ ԿԳՄՄՆ ԲԿԳԿ «Հեռավար լաբորատորիաների հիմնադրման ծրագիր - 2026» մրցույթի հայտի երաշխավորում
4. Ընթացիկ հարցեր

**1. Որոշ կրթական ծրագրերի ուսումնական պլաններում փոփոխություն**

Դեկան, տ.գ.թ., դոցենտ Կ.Խաչատրյանը ներկայացրեց կրթական ծրագրերը՝ բակալավրի «Ֆինանսներ» (ղեկավար՝ տ.գ.թ., դոցենտ Գ.Սահակյան) և մագիստրատուրայի «Գործարար վարչարարություն (կառավարում)» (ղեկավար՝ տեխ.գ.թ., դոցենտ Հ.Զաքոյան), որոնց ուսումնական պլաններում կատարված փոփոխությունները պետք է հաստատվեն գիտխորհրդի կողմից և օրակարգի առաջին հարցի քննարկումը սկսելու համար ձայնը փոխանցեց բակալավրի «Ֆինանսներ» կրթական ծրագրի ղեկավար, Ֆինանսահաշվային ամբիոնի վարիչի ժամանակավոր պաշտոնակատար, տ.գ.թ., դոցենտ Գ.Սահակյանին:

**1.1 ԼՍԵՑԻՆ.** ԵՊՀ տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի բակալավրի «Ֆինանսներ» կրթական ծրագրի ուսումնական պլանի փոփոխության հաստատման մասին հարցը:

**1.1 ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.**

**1.** Բակալավրի «Ֆինանսներ» կրթական ծրագրի ղեկավար, տ.գ.թ., դոցենտ Գ.Սահակյանը նշեց, որ ըստ բաղադրիչների գնահատման արդյունավետությունը բարձրացնելու նպատակով վերջին 4 տարիներին ֆակուլտետի բակալավրի և մագիստրատուրայի կրթական ծրագրերը կատարելագործման փուլում են: Էական

բարելավման հետ մեկտեղ առկա են որոշ խնդիրներ: Մասնավորապես՝ որոշ բաղադրիչների (ընթացիկ ստուգում, ինքնուրույն աշխատանք) գնահատման մասով խնդիրներ են առաջանում՝ սեմինար պարապմունքի խմբի մեծությամբ պայմանավորված: Հավելեց, որ բակալավրի «Ֆինանսներ» կրթական ծրագրում երեք դասընթացի («Հարկային վարչարարություն», «Ֆինանսների հիմունքներ», «Ֆինանսական ինստիտուտներ և շուկաներ») մասով այս խնդիրն առկա է: Մատնանշեց, որ մինչև բարելավման գործընթացը նշված դասընթացները (3 ECTS կրեդիտ) կազմակերպվել են միայն դասախոսությունների հիման վրա, բարելավման արդյունքում ուսումնական պլանով ավելացել են նաև սեմինար պարապմունքները (6 ECTS կրեդիտ): Ամփոփելով նշեց, որ որպես լուծում ամբիոնն առաջարկում է նշված դասընթացների սեմինար ժամերը դարձնել գործնական՝ դասընթացների արդյունավետությունը բարձրացնելու նպատակով:

**2.** Հարց հնչեցրեց տ.գ.դ., պրոֆեսոր Թ.Թորոսյանը: Հարցադրումն առնչվում էր սեմինար/գործնական պարապմունքների ձևաչափի տարանջատմանը:

**3.** Դեկան, դոցենտ Կ.Խաչատրյանը հարցադրմանն անդրադառնալով նշեց, որ ֆակուլտետի բակալավրի և մագիստրատուրայի կրթական ծրագրերի կատարելագործման համատեքստում էապես կարևորվել է պրակտիկ բաղադրիչը: Ուսանողներին տրվում են մեծ ծավալի ինքնուրույն և հետազոտական աշխատանքներ, նաև լսարանում քննարկվում են բավական շատ գործնական առաջադրանքներ: Հավելեց, որ մոտ 2 տարի առաջ գիտխորհրդի նիստում հաստատվել են կրթական ծրագրերի ուսումնական պլանների փոփոխությունները՝ արդյունքում մի շարք դասընթացների սեմինար ժամերը փոխարինվել են գործնականով՝ բարձրացնելով դասընթացների արդյունավետությունը և կրթության որակը:

**4.** Մեթոդխորհրդի նախագահ, տ.գ.դ., պրոֆեսոր Գ.Վարդանյանը նշեց, որ «Ֆինանսներ» կրթական ծրագրի ուսումնական պլանի փոփոխված տարբերակի շուրջ մեթոդխորհուրդը կազմակերպել է բովանդակային քննարկում և տվել է հավանություն:

**5.** Հարցի քննարկումն ամփոփելով՝ դեկան Կ.Խաչատրյանը առաջարկեց՝ բակալավրի «Ֆինանսներ» կրթական ծրագրի ուսումնական պլանի փոփոխության հարցը դնել քվեարկության:

**1.1 ՈՐՈՇԵՑԻՆ.** Հիմք ընդունելով ԵՊՀ Ֆինանսահաշվային ամբիոնի 19.03.26թ. թիվ 6 նիստի որոշումը և հաշվի առնելով խորհրդի նիստում արտահայտված կարծիքները՝ հաստատել ֆակուլտետի բակալավրի «Ֆինանսներ» կրթական ծրագրի ուսումնական պլանում կատարված հետևյալ փոփոխությունը՝ «Հարկային վարչարարություն», «Ֆինանսների հիմունքներ», «Ֆինանսական ինստիտուտներ և շուկաներ» դասընթացների սեմինար ժամերը դարձնել գործնական**:**

Բակալավրի «Ֆինանսներ» կրթական ծրագրի ուսումնական պլանի փոփոխությունը հաստատվեց՝ քվեարկության 29 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ արդյունքներով:

**1.2 ԼՍԵՑԻՆ.** ԵՊՀ տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի մագիստրատուրայի «Գործարար վարչարարություն (կառավարում)» կրթական ծրագրի ուսումնական պլանի փոփոխության հաստատման մասին հարցը:

**1.2 ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.**

**1.** Մագիստրատուրայի «Գործարար վարչարարություն (կառավարում)» կրթական ծրագրի ղեկավար տեխ.գ.թ., դոցենտ Հ.Զաքոյանը նշեց, որ կրթական ծրագրի ուսումնական պլանում առաջարկվում է 2 կարգի փոփոխություն: Առաջին փոփոխությամբ նախատեսվում է «Կազմակերպությունների ներքին հսկողություն և աուդիտ» դասընթացը փոխարինել «Կառավարման համակարգերի միջազգային ստանդարտներ» դասընթացով, իսկ երկրորդ փոփոխությունը առավելապես տեխնիկական է՝ կատարել հետևյալ դասընթացների կիսամյակների փոփոխություն՝ «Ռազմավարական կառավարում» (3-րդ կիսամյակից տեղափոխել 2-րդ կիսամյակ), «Կազմակերպությունների վարկանշում» (մասնագիտացման պարտադիր դասընթացների ցանկից տեղափոխել 2-րդ կիսամյակ՝ մասնագիտացման կամընտրական դասընթացների ցանկ), «Կառավարման ոլորտի գործնական խնդիրների լուծում (case study)» (2-րդ կիսամյակից տեղափոխել 3-րդ կիսամյակ): Հավելեց, որ առաջին փոփոխության պահանջը պայմանավորված է միջազգային հավատարմագրման գործընթացին մասնակցությամբ և, որ սույն փոփոխությամբ լուծվում է նաև ուսումնական պլանում միջազգային ստանդարտների («ISO ստանդարտներ») ներառման հարցը, իսկ երկրորդ փոփոխությունը՝ դասընթացների կիսամյակների տեղափոխումը, նպատակ ունի առավել հստակեցնել դասընթացների տրամաբանական հաջորդականությունը:

**2.** Հարցեր հնչեցրեցին տ.գ.դ., պրոֆեսոր Գ.Վարդանյանը, տ.գ.թ., դոցենտ Գ.Ասլանյանը: Հարցադրումներն առնչվում էին գործող ISO ստանդարտներին և կրթական ծրագրում դրանց ներգրավվմանը:

**3.** Տեխ.գ.թ., դոցենտ Հ.Զաքոյանը հարցադրումներին պատասխանելով նշեց, որ գործող շուրջ 24 հազար ISO ստանդարտներից կրթական ծրագրում ներառված են 3-ը:

**4.** Մեթոդխորհրդի նախագահ, տ.գ.դ., պրոֆեսոր Գ.Վարդանյանը նշեց, որ «Գործարար վարչարարություն (կառավարում)» կրթական ծրագրի ուսումնական պլանի փոփոխված տարբերակի շուրջ մեթոդխորհուրդը կազմակերպել է բովանդակային քննարկում և տվել է հավանություն:

**5.** Հարցի քննարկումն ամփոփելով՝ դեկան Կ.Խաչատրյանը առաջարկեց՝ մագիստրատուրայի «Գործարար վարչարարություն (կառավարում)» կրթական ծրագրի ուսումնական պլանի փոփոխության հարցը դնել քվեարկության:

**1.2 ՈՐՈՇԵՑԻՆ.** Հիմք ընդունելով ԵՊՀ Կառավարման և գործարարության ամբիոնի 13.04.26թ. թիվ 9 նիստի որոշումը և հաշվի առնելով խորհրդի նիստում արտահայտված կարծիքները՝ հաստատել ֆակուլտետի մագիստրատուրայի «Գործարար վարչարարություն

(կառավարում)» կրթական ծրագրի ուսումնական պլանում կատարված հետևյալ փոփոխությունները.

1) «Կազմակերպությունների ներքին հսկողություն և աուդիտ» դասընթացը փոխարինել «Կառավարման համակարգերի միջազգային ստանդարտներ» դասընթացով:

2) Կատարել «Ռազմավարական պլանավորում», «Կազմակերպությունների վարկանշում» և «Կառավարման ոլորտի գործնական խնդիրների լուծում (case study)» դասընթացների կիսամյակների փոփոխություն:

Մագիստրատուրայի «Գործարար վարչարարություն (կառավարում)» կրթական ծրագրի ուսումնական պլանի փոփոխությունը հաստատվեց՝ քվեարկության 29 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ արդյունքներով:

**2. ԼՍԵՑԻՆ.** 2025/26 ուստարվա 1-ին կիսամյակի առկա և հեռակա ուսուցման՝ ուսանողների առցանց հարցումների արդյունքների քննարկման վերաբերյալ հարցը:

**2. ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.**

**1.** Ֆակուլտետի դեկան, տ.գ.թ., դոցենտ Կ.Խաչատրյանը նշեց, որ ուսանողների առցանց հարցումների արդյունքները մշտապես քննարկվում և պահվում է ուշադրության կենտրոնում և օրակարգի 2-րդ հարցի քննարկման համար ձայնը փոխանցեց ֆակուլտետի գրասենյակի ղեկավար - դեկանի տեղակալ, տ.գ.թ., դոցենտ Վ.Ալեքսանյանին:

**2.** Դեկանի տեղակալ, տ.գ.թ., դոցենտ Վ.Ալեքսանյանը հանդես եկավ զեկուցմամբ՝ ներկայացնելով 2025/26 ուստարվա 1-ին կիսամյակի առկա և հեռակա ուսուցման՝ ուսանողների առցանց հարցումների ամփոփ արդյունքները, նաև վերջին երեք կիսամյակների արդյունքների դինամիկան: Մատնանշեց այն, որ զեկույցն ավելի շատ տեղեկատվական բնույթ ունի և ներկայացրեց հարցման արդյունքների համեմատական պատկերն ըստ հետևյալ չափանիշների՝ հարցումներին մասնակցած ուսանողների թվաքանակը, ամբիոնների միջին գնահատականը, ուսանողների թվաքանակն ըստ ամբիոնների, հարցման ընթացքում գնահատված առարկաների և դասախոսների քանակները, գնահատականների մասնաբաժիններն՝ ըստ «5.0», «4-ից բարձր և 5-ից ցածր», «4-ից ցածր» գնահատականների, բակալավրի և մագիստրատուրայի կրթական ծրագրերի ղեկավարների արդյունավետության գնահատականները, նաև Ֆակուլտետի գրասենյակի միջին գնահատականը:

**3.** Դեկան, դոցենտ Կ.Խաչատրյանը մատնանշեց, որ ուսանողների 10-12 % մասնակցության պայմաններում հնարավոր չէ արժանահավատ պատկեր ունենալ և ընդգծեց, որ հարցումներին ուսանողների ակտիվ մասնակցության համար պետք է ձեռնարկվեն լրացուցիչ միջոցառումներ:

**4.** Ելույթ ունեցան տ.գ.դ., պրոֆեսոր Վ.Աբրահամյանը, տ.գ.թ., ասիստենտ Կ.Սահակյանը, տ.գ.դ., պրոֆեսոր Թ.Թորոսյանը, տ.գ.թ., դոցենտ Ա.Խառատյանը, գիտխորհրդի սովորող անդամներ Հ.Արզումանյանը և Ա.Հարությունյանը:

Ելույթներում հնչեցին մի շարք առաջարկություններ՝ հարցման մեջ հանել մեկնաբանության բաժինը, հարցումը կազմակերպել լսարանում թղթային տարբերակով, փոխել հարցերի ֆորմատը՝ դարձնել չափանիշներով, մշակել հարցման գնահատման նոր մեթոդաբանություն՝ գնահատել կշիռներով:

**5.** Հարցի քննարկումն ամփոփելով՝ դեկան Կ.Խաչատրյանը ընդգծեց, որ այս ուղղությամբ ԵՊՀ ռեկտորատը լուրջ աշխատանք է տանում միջազգային նմանօրինակ հարթակ տեղայնացնելու նպատակով՝ հատկապես միջազգային հավատարմագրման համատեքստում: Հավելեց, որ զեկույցում ներկայացված տվյալները անհատականացված հասանելի են ամբիոնի վարիչներին, պետք է քննարկվեն նաև ամբիոններում, իսկ զեկույցը՝ ընդունվում է ի գիտություն:

**2. ՈՐՈՇԵՑԻՆ.** Ֆակուլտետի գրասենյակի ղեկավար - դեկանի տեղակալ, տ.գ.թ., դոցենտ Վ.Ալեքսանյանի 2025/26 ուստարվա 1-ին կիսամյակի առկա և հեռակա ուսուցման՝ ուսանողների առցանց հարցումների արդյունքների վերաբերյալ զեկույցն ընդունել ի գիտություն:

**3. ԼՍԵՑԻՆ.** ՀՀ ԿԳՄՍՆ բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի հայտարարած «Հեռավար լաբորատորիաների հիմնադրում 2026» դրամաշնորհային մրցույթին՝ «Կայուն և ներառական էներգետիկ անցում Հայաստանում. համակարգային տնտեսական վերլուծություն» (գիտական թեմայի արտասահմանյան ղեկավարներ՝ Պիտեր Նայկամպ, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր (Նիդեռլանդներ), Կարիմա Կուրտիտ, տնտեսագիտության թեկնածու, դոցենտ (Նիդեռլանդներ), հայաստանյան համաղեկավար՝ տնտեսագիտության թեկնածու, ասիստենտ Լիանա Կարապետյան) գիտական թեմայով հայտի երաշխավորման մասին հարցը:

**3. ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.**

**1.** Դեկան, դոցենտ Կ.Խաչատրյանը մատնանշեց, որ Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի հայտարարած դրամաշնորհային մրցույթներին մասնակցելու պարտադիր պահանջի համաձայն՝ պետք է համապատասխան ստորաբաժանման գիտխորհրդի երաշխավորությունը, և որ գիտխորհրդի անդամները էլեկտրոնային ծանուցմամբ ստացել են հայտի ամփոփագիրը: Հավելեց, որ «Հեռավար լաբորատորիաների հիմնադրում 2026» դրամաշնորհային մրցույթին մասնակցության հայտ է ներկայացրել Ֆինանսահաշվային ամբիոնի ասիստենտ, տ.գ.թ. Լիանա Կարապետյանը և ներկայացված հայտի՝ հետազոտական նախագծի բովանդակությունն ու ծրագրում ներգրավված

օտարերկրյա գործընկերների տվյալները ներկայացնելու համար ձայնը փոխանցեց տ.գ.թ., ասիստենտ Լ.Կարապետյանին:

**2.** Տ.գ.թ., ասիստենտ Լ.Կարապետյանը ընդհանուր գծերով ներկայացրեց գիտական թեմայի արդիականությունը, ՀՀ էներգետիկ ոլորտի կարևորությունը և այս համատեքստում կատարվող հետազոտություններում առկա բացերը՝ շեշտադրելով, որ հետազոտական նախագիծը նպատակ ունի լրացնել այդ բացերը: Ներկայացրեց նաև հետազոտական խմբի անդամներին՝ ընդգծելով, որ պատրաստ են լսել խորհուրդներ և առաջարկություններ նախագծի շրջանակում:

**3.** Հարցեր հնչեցրեցին տ.գ.թ., դոցենտ Գ.Հայրապետյանը, տ.գ.թ., դոցենտ Գ.Սահակյանը, տ.գ.դ., պրոֆեսոր Վ.Աբրահամյանը:

Հարցադրումներն առնչվում էին դրամաշնորհային ծրագրի արտասահմանյան ղեկավարների թվաքանակին, մրցույթը շահելու պարագայում լաբորատորիայի հիմնադրման վայրին և հետազոտական խմբում նեղ ոլորտային մասնագետի ընդգրկված լինելու կարևորությանը:

**4.** Դեկան, դոցենտ Կ.Խաչատրյանը հարցադրումներին անդրադառնալով նշեց, որ կարգը թույլ է տալիս ունենալ արտասահմանյան երկու ղեկավար: Հավելեց, որ այս պահին ֆակուլտետում գործում է 2 լաբորատորիա, իսկ սույն հայտի մրցույթում հաղթելու պարագայում ԵՊՀ ռեկտորատը կորոշի լաբորատորիայի տեղակայման վայրը՝ կա՛մ ֆակուլտետում, կա՛մ ԵՊՀ այլ տարածքում:

**5.** Հետազոտական խմբի անդամ, փոխդեկան տ.գ.թ. Ա.Խալաթյանը, հետազոտական խմբում նեղ ոլորտային մասնագետի ընդգրկված լինելու հարցադրմանը պատասխանելով, նշեց, որ հետազոտական խումբն ակտիվորեն համագործակցելու է էներգետիկայի ոլորտում միջազգային փորձագետ, ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի խորհրդական Աբգար Բուդաղյանի հետ՝ որպես ոլորտային մասնագետ:

**6.** Դեկան, դոցենտ Կ.Խաչատրյանը ամփոփելով քննարկումը առաջարկեց՝ «Հեռավար լաբորատորիաների հիմնադրում 2026» դրամաշնորհային մրցույթին ներկայացված հայտի երաշխավորման հարցը դնել քվեարկության:

**3. ՈՐՈՇԵՑԻՆ.** «Կայուն և ներառական էներգետիկ անցում Հայաստանում. համակարգային տնտեսական վերլուծություն» (գիտական թեմայի արտասահմանյան ղեկավարներ՝ Պիտեր Նայկամպ, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր (Նիդեռլանդներ), Կարիմա Կուրտիտ, տնտեսագիտության թեկնածու, դոցենտ (Նիդեռլանդներ), հայաստանյան համաղեկավար՝ տնտեսագիտության թեկնածու, ասիստենտ Լիանա Կարապետյան) գիտական թեմայով հայտը երաշխավորել ՀՀ ԿԳՄՄՆ բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի հայտարարած «Հեռավար լաբորատորիաների հիմնադրում 2026» դրամաշնորհային մրցույթին մասնակցելու համար:

Հայտը երաշխավորվեց մրցույթին՝ միաձայն քվեարկությամբ (29 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ):

*ԵՊՀ ՏԿՖ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Կ. ԽԱՉԱՏՐՅԱՆ*

*ԵՊՀ ՏԿՖ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Հ. ՄԱՐԳԱՐՅԱՆ*